

## «50% cashback» արշավի իրականացման պայմաններ

### 1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «Այդի Բանկ» ՓԲԸ-ի կողմից 01.07.2022թ-ից 01.10.2022թ-ը ներառյալ իրականացվող 50% cashback արշավ:

1.2 **Քարտ՝** «Այդի Բանկ» ՓԲԸ-ի կողմից IDsalary/IDsalary+ փաթեթի (Այսուհետ՝ Փաթեթ) շրջանակում թողարկված (Այդ թվում նաև Փաթեթին միացված) Mastercard Standard, Mastercard Gold հիմնական քարտեր, որոնք պատվիրվել են Արշավի ընթացքում:

1.3 **Քարտատեր՝** Mastercard Standard, Mastercard Gold Քարտի քարտապան:

1.4 **Վարկային գիծ՝** Փաթեթի շրջանակում տրամադրվող Պրոֆի վարկային գիծ:

1.5 **Տոկոսագումար՝** Արշավի ընթացքում պատվիրված Քարտով Վարկային գծի դիմաց հաշվարկված և Արշավի ընթացքում վճարված տոկոսագումար:

1.6 **Cashback՝** 50% cashback, որը տրամադրվում է Վարկային գծի վճարված Տոկոսագումարների դիմաց:

1.7 Արշավին մասնակցելու դեպքում Քարտատերն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

### 2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակներում՝ ս.թ. հուլիսի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը ներառյալ, Քարտատերերը Քարտին ակտիվացված Վարկային գծի վճարված Տոկոսագումարների դիմաց կստանան 50% Cashback:

2.2 Cashback-ը գործելու է Արշավի ընթացքում Վարկային գծից ինչպես անկանխիկ վճարումների, այնպես էլ կանխիկ օգտագործված գումարների դիմաց հաշվարկված և Արշավի ընթացքում վճարված Տոկոսագումարների դիմաց:

2.3 Արշավի շրջանակներում Cashback-ի առավելագույն գումար է սահմանվում 50 000 (Հիսուն հազար) ՀՀ դրամը՝ նախքան հարկումը:

2.4 Cashback-ի տրամադրման վերաբերյալ լրացուցիչ պայմանները հետևյալն են.

- Cashback-ը կտրամադրվի Բանկի կողմից Արշավի ողջ ժամկետի համար մեկ անգամ՝ Արշավի ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում,
- Cashback-ը կտրամադրվի Արշավի ավարտի՝ 01.10.2022թ-ի, դրությամբ հաշվեգրված այն Տոկոսագումարների դիմաց, որոնք վճարված կլինեն մինչև 01.10.2022թ-ը ներառյալ,
- Cashback չի տրամադրվի, եթե Բանկի կողմից Cashback-ի հաշվարկման պահին Վարկային գիծն ունենա 1 կամ ավել օր ժամկետանց գումար (մայր գումար կամ տոկոսագումար),

- Cashback կտրամադրվի այն Վարկային գծերի համար, որոնք Cashback-ի տրամադրման օրվա դրությամբ գործող են (Փակված չեն),
- Քարտատերը կարող է օգտվել Արշավից միայն մեկ Վարկային գծի համար: Մեկից ավել Վարկային գիծ ունենալու դեպքում կտրամադրվի Cashback Քարտատիրոջ կողմից ամենաշատ հաշվեգրված/վճարված Վարկային գծի Տոկոսագումարների դիմաց,
- Cashback-ից զանձվում և ՀՀ պետական բյուջե է վճարվում եկամտահարկ՝ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Բանկը,
- Cashback չի տրամադրվում Բանկում գործող այլ վարկերի/վարկային գծերի ամբողջական կամ մասնակի վերավարկավորման նպատակով Վարկային գիծն օգտագործելու դեպքում,
- Cashback-ի տրամադրման համար անհրաժեշտ չէ դիմում ներկայացնել կամ զանգահարել Բանկ: Cashback-ի վճարումը կկատարվի Բանկի կողմից՝ բոլոր այն Քարտատերերի հաշիվներին, ովքեր կբավարարեն սույն Պայմաններին և Դրույթներին:

2.5 «Այդի Բանկ» ՓԲԸ աշխատակիցները չեն մասնակցում Արշավին:

2.6 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: